ՆԵՐՔԻՆ ԲԱԶՄԱԲԵԲՐԻ ԴԱՄԲԱՆԱԲԼՈՒՐԸ

ՀՈՎՀԱՆՆԻՍ ՕՀԱՆՅԱՆ

1978 թ. հունիս-հուլիսին Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և Հայաստանի ազգագրության պետական թանգարանի միացյալ հնագիտական արշավախումբը դամբարանների պեղումներ կատարեց Աշտարակի շրջանի Արուճ և Թալինի շրջանի Ներքին Բազմաբերդ գյուղերի միջև ընկած տարածքում։ Այն դամբարանը (№ 4), որի մասին կխոսենք ստորև, գտնվում է Աշտարակ—Լենինական մայրուղու և դրանից դեպի Ներքին Բազմաբերդ տանող ճանապարհի հատման վայրում, ոչ մեծ բլրի վրա։ Այս վայրից մոտ 200 մ հյուսիս գտնվում է մի պեղված քարարկղային դամբարան (խցի խորություն՝ 1,8 մ, երկարություն՝ 2 մ, լայնություն՝ 0,8 մ)։ Դեպի հարավ, մայրուղու ձախ կողմում, բարձր բլրի վրա գտնվում է մեծ կիսավեր աշտարակաձև շինություն։ Շրջակայքում որևէ այլ հուշարձան հայտնի չէ։

Պեղված դամբանաթմբի (նկ. 1) տրամագիծը 14 մ է, բարձրությունը՝ մոտ 1 մ։ Դամբանաթումբը հեռացնելուց հետո բացվեց օվալաձև շարվածքով սամբանախուցը։ Ի տարբերություն դամբանաթմբի մեծ չափերի՝ թաղումնային խուցը համեմատաբար փոքր էր։ Այս ուներ 1,3 մ երկարություն, միջին մասում՝ 0,6 մ լայնություն (ծայրերում՝ 0,4-ական մ), իսկ խորությունը՝ 0,5 մ էր։ Ոնդ որում, դետինը փորված էր 10—15 սմ, իսկ խցի մնացած բարձրությունը կազմում էին մեկ շարքով դրված օվալաձև շարվածքի քարերը։ Որպես ծածկ, հավանաբար, ծառայել են դամբանաթմբի քարերից փոքր-ինչ մեծ, կլորավուն, շարվածքի մոտ չհենվող երեք քարերը։ Կմախքը գտնվում էր կծկված վիճակում, ձախ կողքի վրա դիրքով դեպի հարավ։

Հայաստանում օվալաձև դամբանախցերը բնորոշ են մ. թ. ա. VI—IV դդ. և գոյատևել են մ. թ. ա. III—I դդ.[1]։ Որոշ դեպքերում այդ դամբարաններն ունեն կեղծ թաղակապ ծածկեր, օրինակ, Կարմիր բլուրի բաղաքային թաղամասի մ. թ. ա. III—I դդ. թվագրվող դամբարանները[2]։ Ներքին Բազմաբերդի դամբարանը չունի այդ ձևը։ Նրա պատերը ուղղահայաց են։ Եթե այս դամբարանն ունեցել է ծածկ, ապա, ինչպես ասվեց, որպես այդպիսին պետք է ծառայեին այն միջին մեծության կլորավուն քարերը, որոնք քիչ են տարբերվում լիցքի քարերից։ Բացի այդ, այս դամբարանն ունի կանոնավոր, համաչափ օվալի ձև, որը չի կարելի ասել վերը նշված մյուս թաղումների մասին։ Օվալաձև դամբարաններ հայտնաբերվել են նաև Գառնիի՝ մ. թ. ա. III—I դդ. դամբարանադաշտում (№ 93 և № 117 դամբարանները[3])։ Փարաքարում 1961 թ.

---

[1] А. А. Мартиросян. Город Тейшебаини, Ереван, 1961, с. 146.

[2] А. А. Вайман, Г. А. Тираняи, Кармирблурский некрополь эллинистического времени (ՀՍՍՀ ԳԱ «Լուրեր», 1974, № 8, էջ 61—62).

[3] Ж. Д. Хачатрян, Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956—1972 гг.), Ереван, 1976, с. 13, 16



Աղյուսակ I։

հայտնաբերվել է աշտարակաձև դամբարան, որի մեջ կառուցված դամբարանախուցն ունի նույն օվալաձև կառուցվածքը։ Վերջինս թվագրվում է մ. թ. ա. I դ. ըստ Տիգրան II-ի և Արտավազդ II-ի այնտեղ գտնված դրամների[4]։ Ինչպես Ներքին Բազմաբերդի դամբարանում, այնպես էլ թվարկված նույնատիպ թաղումների մեծ մասում կմախքը գտնվում էր կծկված վիճակում, կողքի վրա։

Թաղումնային գույքի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում արծաթյա, խոյագլուխ վերջավորություններով ապարանջանը (աղ. I, նկ. 1)։ Համված-

4 Գ. Տիրացյան, Փարպիի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Փոքր Ասիայում («Բանբեր Երևանի համալսարանի», 1970. № 1, էջ 234)։

յում այն նուռ է. ուռուցիկ. ձուլածո վերջավորություններին, կոփման և հղկման միջոցով, տրվել է ոչխարի գլխի տեսք. Հետո բարակ լարերը ոլորուն եղջյուրի տեսք ստանալով զոդվել են գլխիկներին։ Իսկ աչքերը պատկերելու համար ծայրում կլորավուն գործիքի միջոցով կտրվածքում 1 մմ տրամագիծ ունեցող դաջվածք է արվել։ Սուր գործիքով անցքեր են բացվել՝ ըթանցքերը պատկերելու համար։

Կենդանակերպ վերջավորություններով ապարանջանները հայկական լեռնաշխարհում տարածված են դեռ մ. թ. ա. I հազարամյակի սկզբներից։ Ուրարտական շրջանում հայտնի են առյուծագլուխ և օձագլուխ վերջավորություններով ապարանջաններ[5]։ Իսկ աքեմենյան և հետագա ժամանակաշրջաններում ընդհուպ մինչև մ. թ. ա. I դ. կենդանակերպ վերջավորություններով ապարանջանները լայն տարածում են ստանում։ Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերվել են բազմաթիվ ապարանջաններ։ Դրանց հիմնական, բնորոշ առանձնահատկությունն իրանի ներճկվածությունն է, որը հատուկ է աքեմենյան ապարանջաններին[6]։ Ներճկված է նաև Հայաստանի մ. թ. ա. III—I դդ. դամբարաններից գտնված բրոնզե ապարանջանների մեծ մասը[7]։ Ներքին Բազմաբերդի արծաթյա ապարանջանը երկար օգտագործելու հետևանքով ծռմռված է և դժվար է որոշել նրա ներճկված լինելը։ Այս ապարանջանի ուղղակի զուգահեռները (պարզ արտահայտված խոյագլուխ վերջավորություններով այլ ապարանջաններ) մենք չկարողացանք գտնել։ Որպես ուշագրավ հետաքրքրության արժանի է Մինգեչաուրից, կանացի կարասային թաղումից գտնված արծաթյա ապարանջանը[8]։ Այն նույնպես խոյագլուխ վերջավորություններով է, բայց կատարման տեխնիկայով միանգամայն տարբեր է։ Հատվածքում ուղղանկյունաձև, իրանը ներճկված և բազմապիսի զարդեր ունեցող մինգեչաուրյան ապարանջանն ուղեկցվում է պարթև Արշակունիների մ. թ. ա. I դ. թվագրվող դրամներով։

Իջևանի շրջանում, Աստղիբլուրի դամբարանադաշտից հայտնի են ոչխարագլուխ վերջավորություններով երկու բրոնզյա ապարանջաններ, որոնք թվագրվում են մ. թ. ա. VI—V դդ.[9]։ Նմանատիպ ապարանջաններ են հայտնաբերվել նաև Բեշթաշենում (Վրաստան) և Կուրթանում[10]։

Ներքին Բազմաբերդի դամբարանից գտնվեց 15 սմ երկարությամբ թիակ, որը մի ծայրում փոքր-ինչ ուռուցիկ է, իսկ մյուսում՝ տափակ և աստիճանաբար լայնացող (աղ. I. նկ. 2)։ Նման թիակներն արդուզարդի համար օգտա-

---

[5] Б. А. Куфтин. «Урартский колумбарий» у подошвы Арарата и куро-аракский энеолит, Тбилиси, 1944, с. 39, табл. 5-й, с. 28.

[6] Գ. Ա. Տիրացյան, Հայաստանի նյութական մշակույթը 6—4-րդ դդ. մ. թ. ա. («Պատմա-բանասիրական հանդես», 1969, N 4, էջ 153), Ժ. Դ. Խաչատրյան, Հնագիտական հայտնագործություններ Գառնիում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1966, N 1, էջ 88). Նույնի՝ Гарни V, с. 96; В. Петренко. Украшения Скифии VII—III вв. до н. э. («Археология СССР. Свод археологических памятников»), выпуск Д 4—5, М., 1978, с. 46, рис. 2.

[7] Ж. Д. Хачатрян. Гарни V, рис. 30—32, 35; А. А. Вайман, Г. А. Тирацян, նշվ. աշխ., էջ 61—62, 64։

[8] «Золотые и серебряные предметы из археологических раскопок Азербайджана», Баку, 1966, табл. 14.

[9] С. А. Есаян. Астхиблурский могильник (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1968, N 6, էջ 88, տախտ. IV, նկ. 9)։

[10] Նույն տեղում, էջ 89։

գործվող գործիքներ են եղել, որոնցով փոքրիկ արվակներից քուսկներ են հանել[11]։ Դրանք հավանաբար օգտագործվել են նաև բժշկության բնագավառում։ Նման փոքրիկ թիակները հատկապես մ. թ. ա. III—I դդ. լայն տարածում են ստանում։ Հայտնի են Գառնիի անտիկ ժամանակաշրջանի դամբարանադաշտից (№ 123, № 61, № 116, № 113 և այլն) ու Սիսիանի՝ մ. թ. ա. II—I դդ. դամբարանից գտնված թիակները[12]։ Հատկանշական է, որ ինչպես Սիսիանից գտնված, այնպես էլ քննվող թիակը տափակ մասում ունեն մի քանի գոտներ։

Նկ. 1.

Խնդրո առարկա դամբարանից գտնվեցին նաև արծաթյա, ծայրերն իրար միացած ձվաձև օղեր (աղ. I, նկ. 3)։ Հայաստանում այդպիսի օղեր հանդես են գալիս դեռևս ուշ բրոնզի դարաշրջանից և հարատևում են մինչև մ. թ. ա. I դ.։ Սրբեմն դրանցից կախվել են հուլունքանման զարդեր և նույն տիպի ավելի փոքր չափերի օղեր[13]։

11 Ж. Д. Хачатрян, Гарни V, с. 101

12 Նույն տեղում, նկ. 12, 39, 49.

13 Նույն տեղում, էջ 103, նկ. 43, 44։

Դամբարանի նյութերի մեջ համեմատաբար առատ են սերդոլիկից ագաթից ու ապակու պաստայից պատրաստված գլանաձև, կլոր, կաթիլաձև հուլունքները (աղ. I, նկ. 4, 5)։ Այս դեպքում, ինչպես նաև մ. թ. ա. VI—I դդ. դամբարանների մեծ մասում, գերակշռում են ապակու պաստայից հուլունքները։ Այս համադրանքը հատկապես բնորոշ է մ. թ. ա. III—I դդ. թաղումներին[14]։ Դամբարանում գտնվեցին նաև երկաթե ապարանջան ու մատանի, ուղղանկյունաձև հատվածքով, ծայրերն անջատված բրոնզե մատանի և երկու ծովախեցի (աղ. I, նկ. 6, 7)։

Այսպիսով, Ներքին Բազմաբերդի № 4 դամբարանի ճշգրիտ թվագրման հարցը որոշ չափով դժվարանում է, քանի որ այնտեղից գտնված նյութերի մեծ մասը կարող էր հանդես գալ սկսած մ. թ. ա. VI դ. մինչև մ. թ. ա. I դ. ներառյալ։ Ներքին Բազմաբերդի արծաթյա խոյագլուխ ապարանջանը, հավանաբար, կարելի է համարել մ. թ. ա. VI—IV դդ. աքեմենյան ոսկյա, կենդանակերպ, որոշ դեպքերում ֆանտաստիկ կենդանիների պատկերներով ապարանջանների հետագա արձագանքը։ Այդպիսին են համարվում մ. թ. ա. IV—I դդ. կենդանակերպ վերջավորություններով ապարանջանները, որոնք գտնվել են Վրաստանում ու Հայկական լեռնաշխարհում և ունեն լավ թվագրվող ուղեկցող նյութեր (դրամներ, խեցեղեն և այլն)։ Մեր պեղած դամբարանը մ. թ. ա. IV—I դդ. թվագրելու օգտին է խոսում նաև փոքրիկ թիակը, որը հաճախ է հանդիպում այդ ժամանակաշրջանի կանացի թաղումներում։ Որպես № 4 դամբարանի առանձնահատկություն, կարելի է նշել խեցեղենի իսպառ բացակայությունը։ Նույն պատկերը նկատվել է Կարմիր բլուրի քաղաքային թաղամասում, մ. թ. ա. III—I դդ. մի քանի թաղումներում[15]։

КУРГАН В НЕРКИН БАЗМАБЕРДЕ

ОГАНЕС ОГАНЯН

Резюме

Летом 1978 г. объединенный отряд археологической экспедиции Центра арменоведческих исследований Ереванского госуниверситета и Государственного музея этнографии Армении произвел раскопки курганов в Аштаракском и Талинском районах. Особый интерес представляет курган № 4 близ села Неркин Базмаберд, датируемый IV—I вв. до н. э. Основанием для датировки служат аналогичные предметы, обнаруженные в разных памятниках Армении этого периода (в античном некрополе Гарни, Кармирблурском некрополе эллинистического периода и т. д.). Среди находок исключительный интерес представляет серебряный браслет, украшенный головками муфлонов, условные аналогии которого обнаружены в памятниках Закавказья и Древнего Востока.

[14] А. А. Вайман, Г. А. Тирацян, նշվ. աշխ., էջ 61։

[15] Նույն տեղում, էջ 62։